



Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատուն մէջ.

Մեր հասցէն. Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաւարանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յունիսի 29-ին, երկարատեւ եւ ծանր հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱ ԷՄԻՆԵԱՆ,

որի մասին խորին վշտով յայտնում են ազգականներին եւ ծանօթներին հանգուցեալի
զաւակները: Յուդարկաւորութիւնը՝ հանգուցեալի տանից, որ գտնվում է Միքայէլեան
փողոցում, № 160, Թանգոյան ա. Աստուածածին եկեղեցին՝ Երեւանքի, յունիսի 3-ին,
առաւօտեան 9 1/2 ժամին:

2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու հիմնարկութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Երեւանից. Նամակ
Կարսից. Նամակ Եւրոպայից. Նամակ Խմբագրու-
թեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Հրէշներ շուրջը. Արտաքին լուրեր. —
ՀՆՈՒՄԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բազուի նաւթարդիւնարե-
րութիւնը 1900 թուին:

ԵՐԵՎԱՆԻ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Մշակի» այսօրվայ համարում մեր ըն-
թերցողները կը կարգան մի հեռագրական
լուր, շատ ուրախալի Ալեքսանդրօպոլի հա-
մար: Յարգված են այնքանագրօպոլիների
երկու խնդիրները: Հաստատված են ա-
ռեւտրական դպրոցի եւ քաղաքային
հասարակական բանկի կանոնադրու-
թիւնները:

Ալեքսանդրօպոլի համար դրանք շատ
կարեւոր լուրեր են: Վաղուց այնքանագ-
րօպոլիները ամէն տեսակ ճիգեր են թա-
փում ունենալ իրանց քաղաքում միջնա-
կարգ դպրոց եւ շատ անգամ դիմել են
վարչական շրջաններին եւ Ժողովրդական
լուսաւորութեան միւնիստրութեանը այդ
տեսակ խնդիրներով. սակայն զանազան հիմ-
նաւոր թէ անհիմն պատճառներով այդ
խնդիրները մերժվել է մինչեւ այժմ: Ալեք-
սանդրօպոլիները վերջապէս կանգ առան
առեւտրական դպրոցի ծրագրի վրա, որ եւ
արժանացաւ այժմ պաշտօնական հաստա-
տութեան: Դպրոցը պէտք է լինի եօթըն-
դասարանեան: Ինչ վերաբերում է հասա-
րակական բանկին, պէտք ասել, որ թէեւ
նրա կարիքը վաղուց զգացվում էր, բայց
նրա մասին հարցը լուրջ կերպով դրվեց
միայն վերջին տարիներում, քաղաքային
խնայարարութիւն մտցնելուց յետոյ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ 1900 թուին

I

Բազուի նաւթարդիւնարները ժողովի
խորհուրդը իւրաքանչիւր տարի հրատարա-
կում է նաւթային արդիւնաբերութեան վե-
րաբերեալ տեղեկագիր:

Այս քանի օրս լոյս է տեսել անցած 1900
թւի տեղեկագիրը, որը թէ ծաւալով եւ թէ
ընդարձակութեամբ աւելի ճոխ է, քան նախըն-
թացները: Տեղեկագիրը, որ բաղկացած է
747 երեւոյց, ունի 13 յանգում եւ երկու
բարձրագոյն: Բովանդակութիւնը վերածված է
երեք բաժանմունքի: Առաջին բաժանմունքը
վերաբերում է նաւթահանքերի, գործարան-
ների, նաւթային բերքերի առեւտրի եւ դրանց
արտահանութեան դրութեանը, երկրորդը բա-
ժանմունքը՝ Ամերիկայի Միացեալ-Նահանգ-
ների նաւթարդիւնաբերութեանը, նոյն 1900
թւի ընթացքում, եւ Գործնու նաւթարդիւ-

Ալեքսանդրօպոլի մեր զաւառական բազ-
մամարդ քաղաքներից մէկն է: Նա պա-
րունակում է աւելի քան 32,000 հոգի
ընկել: Այդ քաղաքում վաղուց զգաց-
վում է կրթութեան պահանջը եւ բնակիչ-
ների մի մասը ստիպված է իր զաւակնե-
րին ուղարկել ուրիշ քաղաքներ՝ միջնա-
կարգ դպրոցներում ուսանելու համար:
Այժմ առեւտրական դպրոցի հաստատվելով
լրացվում է եղած պահանջը մի որոշ չա-
փով:

Երկարութեամբ անցնելով Ալեքսանդրօպոլի
զաւառի միջով, զաւառի ազգայնական
կուլտուրականութիւնը, քաղաքի
ընդարձակվելը՝ կամայականաց հերթական
են դարձնում Ալեքսանդրօպոլի համար կրթ-
ութեան եւ հասարակական հիմնարկու-
թիւնների բացումը: Ուրախալի է, որ ա-
ռեւտրական գնել նրանց սկզբնաւորութեան
հիմքը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Ն

Թէեւ փոքր ինչ ուշ, բայց չենք կարող չը
կատարել մեր պարտքը եւ չարձանագրել այս-
տեղ մի ցաւալի մահվան դէպք: Յունիսի սկզ-
բին Կ. Պոլսում վախճանվեց տիկին Միրասէ-
տեան: «Սուրհանդակ» լրագիրը հետեւեալ տո-
ղերն է նուիրում հանգուցեալին.

Տիկին Միրասէտեան, որ անցեալ շաբթու-
անձայն, անշուք հրաժեշտ տուաւ կեանքին,
այն աշխատակորներէն էր, որոնք բառերու
հետ չեն խաղար, փողով ու թմբուկով չեն
ծանուցաներ իրենց կատարած հանրօգուտ
աշխատութիւնը, թողով որ իրենց գործը
խօսի բարձրաձայն: Եւ հանգուցեալ տիկին
կատարած գործը լոյն պերճախօսութեամբ
մը իր արձագանգը կը հասցնէ մեզի մինչեւ
այսօր, իրեն տնօրէնութիւնը Բերայի Արուես-
տանոցին կատարած հանրօգուտ գործին վեր-

նաբերութեան վիճակագրական տեղեկութիւն-
ներին, իսկ երրորդը կազմված է աղիւսակ-
ներից, որոնք մանրամասն տեղեկութիւններ
են ներկայացնում նաւթարդիւնաբերողների
թէ նաւթահանքերում եւ թէ գործարաններում
տեղի ունեցած գործունէութեան մի մի եւ
եւ նոյն ժամանակ տեղեկութիւններ են տա-
լիս արտահանութեան մասին թէ ծովով եւ
թէ երկաթուղիներով:

Այդ տեղեկագիրը երեւում է, որ առ 1-ին
յունիսի 1901 թ. նաւթարդիւնաբերող ֆիր-
մաներ եղել են 167 հատ. մի ամբողջ տարվայ
ընթացքում աւելացել է միմիայն 7 ֆիրմա,
որովհետեւ 1900 թւի յունիսի մէկին արդէն
եղել է 160 ֆիրմա: Նախընթաց տարիների
հետ համեմատած՝ այդ կողմից 1900 թւակա-
նը ամենապակաս թիւն է ներկայացնում:
1898 թւի ընթացքում 31 նոր ֆիրմա աւելա-
ցաւ. այդ այն «անհայտ» տարին էր, երբ կոյր
ողեւորութիւն էր տիրապետում, երբ ընկե-
րութիւններ, ձեռնարկութիւններ սուսկի պէս
էին բուսնում...

Անցած տարվայ ընթացքում ֆիրմաների այդ
աստիճան պակաս թիւ հանդէս գալը՝ զլուս-
ւորապէս բացատրվում է փոքր այն պակասու-

յանալէն տանեալ տարիներ վերջը: Մի վ չի
յիշեր նոյն Արուեստանոցի փայլուն օրերը,
յորում ձեռագործի, ասեղնագործութեան եւ
կանացի հագուստներու կարուծեւին մէջ հա-
ւասարապէս ճարտարութիւն ունեցող այդ
տիկինը ձեռքին տակ բաւական թուով հայ
աղջիկներ կրցան կեանքի պայքարին մէջ
անվախ նեղվելու չափ ճարտարութիւն ձեռք
բերել իրենք: Այս մասնաւոր հարստութեամբ
մը կը յիշվի մինչեւ այսօր ալ թէ աղջկանց
արուեստանոցը յաջողապէս կը մրցէր Բե-
րայի եւրոպական նմանօրինակ հաստատու-
թիւններու հետ եւ բարձր դասուն պատկա-
նող շատ եւրօպացիներ չէին վարաներ ի-
րենց պիտոյը այդ հայ հաստատութեան
ապագայութեւ: Ասիկա պատիւ մըն էր հայ
կնոջ մասնաւոր ճարտարութեան եւ ճաշակի
նրբութեան: Բայց այդ պատիւէն աւելի որ
իրաւամբ կը ցոյանար ամբողջ հայ հասա-
րակութեան վրա, տիկին Միրասէտեանի
անունը յիշատակելի պիտի մնայ մանաւանդ
անոր համար, որ իրմէ վերջը Բերայի ա-
րուեստանոցը ցարդ չունեցաւ բնաւ փայ-
լուն շրջան մը, հակառակ եղած զանազան
փորձերու, որոնց էն վերջինն ալ (հիմա-
կուանը) յաջողութեան վիճակի մը մէջ չէ
որ կը ներկայանայ եւ կազմ ի կազմ կը քա-
լէ: Ասիկա զատ յիշեալ տիկինը չնորհի է, որ
քանի քանի հայ աղջիկներ պատուաւորա-
պէս կապրին այսօր, թերեւս անոնց իւրա-
քանչիւրը ամբողջ ընտանիքներու ապրուստն
ալ հոգալով, ու չը ստիպուելով աւելացնելու
Թեր բազմաթիւ վարձուհիներու, որոնք
կեանքի փորձառութիւնը տակաւին չիւրա-
ցուցած, ու տարրական նախալրթութիւն
մը հազիւ ստացած, ազգին մանուկները կըր-
թելու, դաստիարակելու կեցին:

Հազար անգամ կրկնված եւ ամենատար-
րական հասկացողութիւն դարձած մի ճշմար-
տութիւն է, որ մի ազգի բարոյական եւ կուլ-
տուրական վերածնութեան, ազգայնագիտութեան
հիմնաքարը ընտանիքն է, ուր կինը այնքան
մեծ դերը եւ նշանակութիւն ունի: Տիկին
Միրասէտեանի նման մի համեստ, ազգան-
դաւոր գործիչ—իսկի դա տաղանդ նոյն
իսկ արհեստի, ձեռագործի մէջ—գնում է մեր
առաջ այն հարցը, թէ ինչքն եւ ինչքն չէին
կարող անել հայ կանայք իրանց ազգի համար,
եթէ աշխատանքի յօժարութիւն եւ ընդունա-
կութիւն ցոյց տային: Իսկ պաճառաւորապէս
լոյլ արտաքինով մի գրաւիչ իր զանաւոր
ձգտում ցոյց տուող կինը մի անէծք է իր ցեղի
համար: Իսկ հայ կինը, դժբաղդաբար, մեծ
մասամբ այդպէս է: Ահա նոյն «Սուրհանդակ»
դիմում է հայ տիկիններին եւ այսպիսի հար-
ցեր է տալիս.

Խնդրեմ, հաճեցէք ընել, ինչ մասնակցու-
թիւն ունեցած էք մեր հանրային գործերուն
մէջ, որ բարեարդական ձեռնարկը բրած էք
եւ ի դուրս հանած, կամ ինչ կարեւոր դեր
ունեցած էք ձեր տեղի կէսին բրած առաւել
կամ նուազ հանրօգուտ գործերուն մէջ:
Մի ժամանակ Կ. Պոլսի հայուհին կրթական

թիւնով, որ զգալի էր ոչ միայն այստեղ, այլ եւ
ամբողջ Ռուսաստանում. բացի դրանից, շօշափե-
լի դժուարութիւն է ներկայացնում նաեւ կան-
խիկ վճարով արվող գրաւակների խնդիրը: Պե-
տական հողեր վերցնող կապալառու հարկա-
դրված է նախօրէն գրաւական մտցնել պետա-
կան գանձարանը. այդ սկիզբն է առել 1896
թւականին եւ այսօր մի քանի միլիոնների են
հասնում այդ գրաւակները, որոնք թափ-
ված են գանձարանում առանց որ եւ չը շա-
նառութեան:

167 նաւթարդիւնաբերող ֆիրմաներից նաւթ
են ունեցել միայն 146 ֆիրմա, 13 ֆիրմա
արդէն ձեռնարկած են եղել, բայց դեռ նաւթի
չեն հասել, իսկ 8 ֆիրմա ամբողջ տարվայ
մէջ ոչինչ չեն շինել:

167 նաւթարդիւնաբերող տրամադրութեան
տակ եղել է 212 նաւթահանք. այդ տարվայ
վերջին, իսկ տարվայ սկզբին՝ 206. ասել է թէ
տարվայ ընթացքում աւելացել է 6 նաւթա-
հանք:

212 նաւթահանքից՝ 69 նաւթահանք գտնու-
վում է Բալխանի, 97 հատ՝ Սաբունյի, 21
հատ՝ Րամանի, 20 հատ՝ Բիբի-Էլյաթի, 5 հատ՝
Բինաղաղի: Այդ բոլոր նաւթահանքերում գը-

ընկերութիւններ էր կազմում, աշխատում էր
օգնել աղքատներին, թշուառներին, աշխա-
տում էր կրթութեան եւ արուեստների միջո-
ցով գոյութեան զէնքեր տալ զրկվածներին, ան-
օգնականների ձեռքը: Իսկ այժմ Մի շարք
հարցեր, որոնք սկսվում են լինել, բառով եւ
անպատասխան մնում, շատ լաւ ապացուցա-
նում են, թէ ինչ է մնացել այժմ:

«Ինչո՞ւնք» շարքը աւելորդ է երկարել:
Բացայայտ է թէ բան մը չէք ընել, բան
մը չէք ուզել ընել ի նպատակ հանրային օ-
գուտին:

Ասիկայ պատիւ չէ ձեզի, տիկիններ,
զուք ալ կարեւոր մէկ մասն էք հայ հասա-
րակութեան, ու գիտութեան գործը, մարդ-
կութեան գեղեցկագոյն կէսին զարգացման
գործը՝ ձեր վրա դրված պարտականութիւն
մըն է, որ չէք կատարել:

Պարտադանքներ էք ուրեմն:

Ու ձեր ներքին կեանքին մէջ ձեր նիստ
ու կացով, ձեր վարք ու բարքով, ձեր ար-
դուաւորով, ով հայ բարձր դասու տիկիններ
մասնաւոր, հետեւ էք բարի օրինակներ ըլ-
լալէ հայ միջակորներին պատկանող կիներ-
րու, որոնք զննել կը կապեն, ինչպէս որ
դուք կը կապեցէք ինչ շողողուն բան որ
կայ եւրօպական կեանքի կեղեւին, մակե-
րեւոյթին վրա:

Դեռ պոյսեցի հայուհին էլի մի քանի բան
կարող է ցոյց տալ իրան արդարացնելու հա-
մար: Իսկ առաւանդ կինը Մենք էլ նոյն հար-
ցերն ենք տալիս մեր անտարբեր, չալլ, օտա-
րացած եւ օտարամոլ մայրերին ու քոյրերին:
Բայց նրանք կարող են պատասխանել: Աւագ,
նրանք նոյն իսկ չեն հասկանում այն լեզուն,
որով մենք գրում ենք այս տողերը:

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Յունիսի 27-ին

Թեմական դպրոցի գլխին էլի մտածում են
փոթորիկ բերել: Արձակված են 7 ուսուցիչներ.
արդար թէ անարդար այդ մի կողմ մնալ. արա-
յներ միշտ լինում են մանաւանդ նուրբ խըն-
դիրներում, այսպէս օրինակ, արձակվածներից
մի երկուսին կարելի էր պահել, եթէ միայն
նախկին ուսուցիչներից պահելու խնդիր առաջ
գար, եւ մնացածներից մի երկուսին արձա-
կել, բայց քանի որ այդ վճիռը տեղի է ունե-
ցել տեսի, ըստ հոգաբարձուների եւ հոգա-
բարձութեան նախագահ Սուքիաս եպիսկոպոսի
միաձայն որոշմամբ եւ ընդհանուր համաձայ-
նութեամբ, ուստի իւրաքանչիւր ինքնասերու-
թեան տէր ուսուցիչ համառութեան կը թողնէր
դպրոցը եւ իր համար կորստի այլ պաշտոն,
բայց այդպէս չէ. արձակված եօթը ուսուցիչ-
ներից նրանք, որոնք ոչ մի իրաւունք չունեն
հոգաբարձութեան վճիռ դէմ արտունջ կամ
բողոք բարձրացնելու եւ որոնց հետանալը շատ

տրնվում են 2800 նաւթի հորեր, որոնցից
1321 հատ տալիս է նաւթ, 896 հատ գտնվում
է նախապատրաստական գործողութեան մէջ—
քանդում, խորացում, ուղղում, մաքրում եւ
նաւթ քանդելու փորձեր են անում,—իսկ 583
հատ մասնավոր է անգործունէութեան: Կարելի
առնելով գլխաւորապէս նոր քանդվող հորեր
վրա, նկատելի է, որ տարեցտարի քանդվող
հորերի թիւը աւելանում է, սակայն այն
տարբերութեամբ, որ տարեկան աւելացածնե-
րի քանակութիւնը գուզընթանում է ավել եւ
անաղող հանգամանքների հետ—աղող դէպքում՝
տարբերութիւնը շատ է լինում, անաղող դէպ-
քում, ընդհակառակը, քիչ: Այս տեսակետից հե-
տաքերի պատկեր են ներկայացնում համեմա-
տական թւանշանները վերցրած մի քանի տար-
վանը միասին:

1894 թ. փորվել է	102 նոր հոր, աւելացել է:
1895 » » » »	113 » » » 11 հատ
1896 » » » »	178 » » » 65 »
1897 » » » »	244 » » » 66 »
1898 » » » »	320 » » » 76 »
1899 » » » »	507 » » » 137 »
1900 » » » »	744 » » » 237 »
1901 » » » »	768 » » » 24 »

